ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից 2026 թվականի 9 ամիսների ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

1. Զբոսաշրջություն և այցելուների սպասարկում

2026 թվականի առաջին 9 ամիսների ընթացքում ազգային պարկ են այցելել ընդհանուր 2337 այցելու: Այցելուներին ներկայացվել են ազգային պարկի բնական արժեքները, կենսաբազմազանությունը, էկոզբոսաշրջային երթուղիները, ռեկրեացիոն հնարավորությունները և մատուցվող ծառայությունները: Տրամադրվել են անհրաժեշտ տեղեկատվություն և խորհրդատվություն՝ անվտանգ և պատասխանատու հանգստի կազմակերպման վերաբերյալ, ինչպես նաև իրականացվել է համապատասխան վճարների հավաքագրում:

2. Զբոսաշրջային մոնիթորինգ և երթուղիներ

Ռեկրեացիոն գոտիներում իրականացվել է զբոսաշրջային մոնիթորինգ, այցելուների հոսքերի հաշվառում և զբոսաշրջային ակտիվության մշտադիտարկում: Կատարվել են զբոսաշրջային երթուղիների և արահետների ուսումնասիրության, գնահատման ու բարեկարգման, ինչպես նաև զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավման աշխատանքներ: Կազմակերպվել են այցելուների ճանաչողական էքսկուրսիաներ, իսկ այցելուներին տրամադրվել են տեղեկատվական նյութեր և խորհրդատվություն:

3. Կրթադաստիարակչական և էկոկրթական աշխատանքներ

Ինը ամիսների ընթացքում իրականացվել են բնապահպանական իրազեկման, էկոկրթական և կրթադաստիարակչական աշխատանքներ: Ինը ամիսների կազմակերպվել է 18 կրթադաստիարակչական միջոցառում՝ 580 աշակերտի և մանկավարժի մասնակցությամբ: Աշխատանքներն ուղղված են եղել ազգային պարկի էկոհամակարգերի, կենսաբազմազանության, բնապահպանության և պահպանվող տարածքի արժեքների ներկայացմանը:

4. Կենսաբազմազանության մոնիթորինգ

Ազգային պարկի տարածքում իրականացվել են բուսական և կենդանական աշխարհի մշտադիտարկումներ, դաշտային դիտարկումներ, ինչպես նաև լուսանկարահանումներ և տեսանկարահանումներ: Մոնիթորինգ է իրականացվել ազգային պարկի «Արևմտյան», «Ախուրյանի կիրճ» և «Արդենիս-Ալվար» տեղամասերում: Կենսաբազմազանության մոնիթորինգի աշխատանքներն իրականացվել են նաև «Հայհիդրոմետ ՊՈԱԿ»-ի աշխատակիցների հետ համատեղ: Իրականացվել է Արփի լճի սառցաշերտի մոնիթորինգ:

5. Բնապահպանական իրազեկում

Սիրողական ձկնորսների հետ իրականացվել են բացատրական աշխատանքներ՝ անվտանգության կանոնների և ազգային պարկի սահմանված ռեժիմի պահպանման վերաբերյալ:

6. Հանրային կապեր և տեղեկատվական աշխատանք

Պարբերաբար թարմացվել են ազգային պարկի պաշտոնական սոցիալական էջերը՝ ներկայացնելով կազմակերպության գործունեությունը, կենսաբազմազանությունը, բնապահպանական և էկոկրթական աշխատանքները, ինչպես նաև զբոսաշրջային հնարավորությունները:

Մշակվել են բուկլետներ, տեղեկատվական պաստառներ և կրթական նյութեր, տեղադրվել ու վերանորոգվել են տեղեկատվական վահանակներ և ցուցանակներ: Քննարկվել և պատասխանվել են քաղաքացիների, զբոսաշրջիկների և տարբեր կազմակերպությունների կողմից ստացված հարցումները, դիմումները և տեղեկատվական հարցումները:

7. Տարածքի և ենթակառուցվածքների աշխատանքներ

Կատարվել են պարբերական այցեր ազգային պարկի տարբեր տեղամասեր՝ տարածքի վիճակի դիտարկման, անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման և լուսանկարահանման նպատակով:

8. Այլ աշխատանքներ

Արդենիս-Ալվար տեղամասում մասնակցություն է ցուցաբերվել հողերի չափման և բաշխման աշխատանքներին: Մասնակցություն է ցուցաբերվել խորհրդակցությունների, սեմինարների և աշխատանքային հանդիպումների: Գիտության և զբոսաշրջության բաժնի կողմից մշակվել և հաստատվել է տարեկան աշխատանքների օրացուցային պլանը՝ գիտահետազոտական, մոնիթորինգային, կրթական և էկոզբոսաշրջային միջոցառումների համակարգված իրականացման նպատակով: Բաժնի աշխատակիցները կատարել են իրենց պարտականությունները և տրված հանձնարարությունները՝ իրականացնելով դաշտային և գրասենյակային աշխատանքներ, այցելուների սպասարկում, գիտական տվյալների մշակում և հաշվետվությունների պատրաստում:

9. Ծառատնկման աշխատանքներ

Ազգային պարկի տարածքում իրականացվել են ծառատնկման աշխատանքներ՝ նպաստելով կանաչապատմանը, անտառային էկոհամակարգերի վերականգնմանը և կենսաբազմազանության

պահպանությանը:Ինը ամիսների ընթացքում տնկվել է 1000 սոճենու տնկիներ:

10. Կենսաբազմազանության կադաստր

Իրականացվել է կենսաբազմազանության կադաստրի վարում՝ տարածքի ֆլորայի և ֆաունայի տեսակային կազմի հաշվառմամբ, տվյալների հավաքագրմամբ, համակարգմամբ, վերլուծությամբ և թվայնացմամբ: Մոնիթորինգի արդյունքները ներառվել են համապատասխան հաշվառման և տվյալների բազաներում:

ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Տեսակ	**I եռամսյակ**	**II եռամսյակ**	**III եռամսյակ**
Սև ագռավ (Corvus corone)	111	87	—
Աղվես (Vulpes vulpes)	11	13	4
Գանգրափետուր հավալուսն (Pelecanus crispus)	22	72	7
Մեծ ձկնկուլ (Phalacrocorax carbo)	9	46	—
Սովորական կաչաղակ (Pica pica)	12	16	—
Հայկական որոր (Larus armenicus)	6687	5380	142
Քարարծիվ	1	13	4
Արտույտ (Alaudidae)	14	12	—

Մոխրագույն կաքավ (Perdix perdix)	9	6	2
Մոխրագույն ագռավ(Corvuscornix)	4	5	—
Կարմիր բադ	17	53	34
Կոնչան բադ	21	98	52
Սպիտակ արագիլ (Ciconia ciconia)	21	10	—
Սովորական սարյակ (Sturnus vulgaris)	10	23	—
Տնային բվիճակ (Athene noctua)	1	—	—
Սպիտակ խաղտտնիկ (Motacilla alba)	2	—	—
Վարդագույն հավալուսն (Pelecanus onocrotalus)	—	34	11
Կվակվա (Nycticorax nycticorax)	—	29	1
Մոխրագույն տառեղ	—	26	5
Սպիտակ տառեղ	—	16	—
Մոխրագույն կռունկ (Grus grus)	—	8	6
Սև փարփար (Fulica	—	14	—

atra)			
Տափաստանային հողմավար բազե (Falco naumanni)	—	5	2
Գորշ նապաստակ (Lepus europaeus)	—	7	1
Գորշուկ (Meles meles)	—	5	1
Աքիս (Mustela nivalis)	—	4	1
Դաշտային մուկ	—	26	10
Սովորական լորտու (Natrix natrix)	—	5	—
Գայլ (Canis lupus)	—	3	1
Գարնանածաղիկ (Primula elatior)	—	2 քմ	—
Պապլոր հայկական (Muscari armeniacum)	—	3 քմ	—
Վեռոնիկա պարսկական (Veronica persica)	—	4 քմ	—
Դեղին խաղտտնիկ (Motacilla flava)	—	3	—
Կտցար (Dendrocopos major)	—	50	—
Մեծ սղոցակտուց բադ (Mergus	—	2	—

merganser)			
Տարգալակտուց (Platalea leucorodia)	—	2	—
Վայրի խոզ (Sus scrofa)	—	18	—
Հայկական ժայռային մողես (Darevskia armeniaca)	—	2	2
Դեղին կոկոռ (Nuphar lutea)	—	85 քմ	—
Տերեփուկ հայաստանյան (Rhaponticoides hajastana)	—	3 քմ	—
Տափաստանային արծիվ (Aquila nipalensis)	—	—	1
Մեծ ենթարծիվ (Clanga clanga)	—	—	2
Փոքրասիական գորտ (Rana macrocnemis)	—	—	1
Սև մասրենի (Rosa pimpinellifolia)	—	—	արձանագրվել է
Մասրենի (Rosa canina)	—	—	արձանագրվել է

Խատուտիկ (Taraxacum officinale)	—	—	արձանագրվել է
Դեղին կոկոռ (Crocus flavus)	—	—	արձանագրվել է
Սոխ ժայռի (Allium saxatile)	—	—	արձանագրվել է
Երեքնուկ մարգագետնային (Trifolium pratense)	—	—	արձանագրվել է
Պատատուկ դաշտային (Convolvulus arvensis)	—	—	արձանագրվել է

«Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի

տնօրեն՝ Ս.Հարությունյան